ԲՈՂՈՔ

ԱՎՏՈՄԱՏՈՎ Ո՞ՆՑ ԿԱՆԳՆԵԻՆՔ ՏԱՆԿԵՐԻ ԴԵՄ

Երեկ «Հայելի» ակումբ էին եկել Դաշտային հրամանատարների խորհրդի մի քանի անդամներ՝ տարածելու մի հայտարարություն, որտեղ արտահայտում էին իրենց բողոքն առ այն, որ «Հայաստանում շարունակվում է յուրաքանչյուր մարդու քաղաքացիական իրավունքների ոտնահարումը, հետապնդումները, ձերբակալությունները...»: Նրանք կոչ էին անում մեր իշխանություններին՝ «Ազատ արձակել մարտական ընկերներին եւ բոլոր քաղբանտարկյալներին, վերջ դնել մարդկանց հետապնդումներին՝ նրանց քաղաքական հայացքների համար»: Հայտարարության ընթերցումից հետո տեղի ունեցավ հարց ու պատասխան Արցախյան պատերազմում հաղթած հրամանատարների՝ Վլադիմիր Առաքելյանի («Նիկոլ Դումանի» ռազմական խորհրդի փոխնախագահ), «Արցախ» գնդի հրամանատար Միքայել Ապրեսյանի եւ Արկադի Կարապետյանի՝ Ղարաբաղի բանակի առաջին հրամանատարի հետ: «Ինչպե՞ս եք տանում մեր իրականությունը, երբ ձեր ընկերներից շատերը ձերբակալված են» հարցին Արկադի Կարապետյանն ասաց. «Միավոր վիրավորանք եմ զգում՝ նախ եւ առաջ»: Վլադիմիր Առաքելյանը, որը միայն վերջերս է դուրս եկել բանտից՝ ստորագրությամբ, ասաց. «Ես 46 օր կալանավորված եմ եղել, իհարկե, ցավով եմ ասում, որ կռված տղաները կալանավորված են, սա հայրենիքի շնորհակալությո՞ւնն էր մեզ... Վատ է, որ մեր հին հողերը ետ բերած տղաները այսօր բանտերում են որպես հրահրիչներ, կազմակերպիչներ, օրենքի նկատմամբ ոտնձգություն անողներ, այն անհիմն մեղադրանքներով, որոնք որ մեզ բոլորիս վրա հիմա դրված են... մեր տղաները որեւիցե բանի մասնակից չեն եղել, ընդհակառակը, մենք փորձել ենք հեռացնել պրովոկացիաները... դեռ իմ դատը չի եղել, ու ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչ է նշանակում իմ հոդվածը՝ պետական հեղաշրջում»: Ապա շարունակեց. «Մեր Մասիսի ջոկատի հրամանատար Հուսիկ Բաղդասարյանին մի երեք փամփուշտի համար տվել են երեք տարի, բոլորս էլ գիտենք, թե որտեղ ինչ կա, «տեցի կռուգում» մի 300-400 հոգի զենք հանեցին իրար դեմ, ոչ մի բան չեղավ, բայց ազատամարտիկին երեք պատրոնի համար էսօր դատում են, հետո թող մեր իշխանավորները չմոռանան, որ պատերազմն ավարտված չէ, լավ, եթե դուք հրամանատարներին տանում՝ բերդերն եք գցում, չեմ հասկանում՝ էսօրվա էն սուտ հայրենասերներն ե՞ն երկիր պահելու, էն Նժդեհից խոսողնեըո՞վ...»: Միքայել Ապրեսյան. «Սասուն Միքայելյանը իմ մարտական ընկերն է, եւ ինձ համար անհասկանալի է, որ նա կարող էր պետության դեմ ոտնձգություններ անել: Տղաները, ովքեր որ կռվել են, էսօր ոնց որ Պանիկովսկու կինոյի էն Վոլֆի կարգավիճակում լինեն, ով գալիս ա, մեզ նստացնում ա: Ինչի՞ համար, որ գնացել-կռվել ե՞նք, որ անտարբեր չե՞նք: Ես էսօր Հյուսիսային պողոտային չեմ կարողանում նայել, որովհետեւ մարդկանց դժբախտության վրա ո՞նց կարող ես երջանկություն կառուցես: Էն ջահելը, որ մեզ պիտի նայի ու ոգեւորվի, պաշտպանի հայրենիքը, ի՞նչ պիտի մտածի»:

Հարց տվեցին, թե՝ «Դուք՝ ազատամարտիկներդ, ձեր մեղքը չունե՞ք, որ այսօր Հայաստանում իշխանության է եկել կրիմինալը, եւ դրա հետեւանքը չի՞ արդյոք, որ ազատամարտիկներն այսօր բանտերում են»: Վլադիմիրն ասաց. «Առանց փակագծերը բացելու ասեմ, որ, այո, մենք մեղավոր ենք»: Արկադին ավելացրեց. «Մեր մեղքը կա, ես մեղավորությունը մեզանից չեմ հեռացնում, բայց լրիվությամբ մեղքը մերը չի, էլի, մասնակի մեղք ունենք»:

Ի՞նչ կլիներ, եթե բոլոր ազատամարտիկները միանային, Մանվելն էլ հարթակում լիներ: «Դա շատ անկանխատեսելի բան կլիներ: Ընթացքը ցույց տվեց, որ իշխանությունը պատրաստվել էր մի ուրիշ ձեւի՝ շատ հմուտ, շատ մեծ ծախսերով, շատ մեծ օպերացիա էին մշակել, որը բերեց էս վախճանին, այնպես որ, այսօր ասել, թե երկրապահը կանգներ... ո՞նց կանգներ, ասենք, ավտոմատով կանգներ տանկերի կամ ավիացիայի դե՞մ...»,- ասաց Արկադի Կարապետյանը: Հնչեց ռեպլիկ՝ «Բայց ժողովուրդը հույս ուներ, որ երկրապահը թույլ չի տա, որ իշխանությունը ժողովրդի վրա գնա», Արկադին ասաց. «Ճիշտ է, մենք բոլորս ընդեղ էինք, որ ժողովրդին չծեծեն, մենք առաջին գիծ կանգնած էինք, բայց որ տեսանք՝ ում են բերել... Ես տեսել եմ լեննականցիներ, ռուսներ, չեչեններ, ինձ ծեծողները, վերջույթներս ջարդողները եղել են լեննականցիներ»: Հարց գնաց այն մասին, թե, ըստ Արկադի Տեր-Թադեւոսյանի, Սերժ Սարգսյանը Շուշիի ազատագրման գործում խիստ կարեւոր դեր է ունեցել, այդպե՞ս է: Այդ հարցին պատասխանեց Արկադի Կարապետյանը. «Ես Շուշիի ազատագրության մի ուղղության հրամանատարն էի՝ Շոշ գյուղի ուղղությամբ: Կա իրականություն պատերազմի մասին, եւ կան միֆեր: Թե մարդիկ որտեղ ինչ են ղեկավարել՝ պալատներում, տներում կամ թեկուզ շտաբում՝ չգիտեմ, բայց կա իրականություն, որը չի համապատասխանում էդ միֆերին: Ես սիրում եմ հստակ խոսել, ինչ որ ես տեսել եմ, էն եմ ասում ու հստակ եմ ասում»: Ազատության հրապարակում վերջույթները ջարդած Արկադի Կարապետյանը հերքեց այն լուրը, որ հրապարակում զենք է եղել. «Այնտեղ զենք չի եղել, մենք կոփված մարդիկ ենք, զենքն էլ էն բանն ա, որ նմանատիպ իրավիճակում հաստատ կօգտագործես: Բայց չի եղել, որ լիներ, կօգտագործվեր: Որովհետեւ նրանք սպանում էին դուբինկեքով, կին, երեխա, ահել, ջահել չէին նայում... ինձ կոնկրետ ծեծում էին էնպիսի հարվածներով, որոնք սպանելու էին տանում, ես մի ուրիշ բան ասեմ, ինձ փրկել են երկու հասարակ միլիցիոներներ, որոնք տարել են ինձ՝ մի պատի տակ են դրել, որ հետները չտանեին, որովհետեւ իրանք իրանց որսը տանում էին հետները»: Իսկ ի՞նչ շարունակություն է ունենալու էդ պայքարը, հրամանատարներն ասացին. «Դե, ոնց որ իրենք ճանապարհի գտան, մենք էլ, երեւի, ջրի նման մի ճանապարհ կգտնենք»:

Գայանե
ԲԱԲԱՅԱՆ
gayane@hraparak.am